

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՆԻԷ ԲՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԵՏԻ Ե ՈՒՂՂԱՆ ԱՌ

Վարչությունն ՆՈՐ ՕՐ Լագրի

ԳԱՀԻՐԷ

Direction du journal

NOR-OR

Caire

Չեռապիրներն ետ չեն դարձուիր,

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ժ. ՄԻՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՍԵՊՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԼՍԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՏԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

ՐԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏՈՍ

Գանիբի համար	սարեկան	50
»	վեցամսեայ	30
Շրջակայից	»	60
»	վեցամսեայ	35

ԱՐՏԱՆԱՏՄԱՆ ԸՆԹԱՐ

Տարեկան	»	Ֆրանկ	48
վեցամսեայ	»	»	40

ԲՈՒՄՈՑ ԵՒ ԿՈՂՎԱՌՆ ԸՆԹԱՐ

Տարեկան	»	Բուրի	7
վեցամսեայ	»	»	4

ՐԱՃԱՆՈՐԴԱԳՐԻ ԿԱՆԹՈՒՆ

ԵՒ ԲՂՔԱԿՑՈՒԹԻՒՆ

Թերթին վարչությունն վրայ է

ՊԱՃՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԱՅ ՏԱՐԻՈՑՈՍ ՕԳՈՍՏՈՍԻ 11-ԷՆ ՍԿՍԵԱՎ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՇՄՏՈՆԱԿԱՆ ԿՆԻՔՆ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻՍԱՐ ՍՄԲԱՏ ՓԱՓՈՉԵԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԶԸ ԿՐՈՂ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԸՆԿԱՎԱԿՐՆԵՐՆ ԱՆՎՈՒԹԵՐ ԿԸ ՆԿԱՏՈՒԹԻՒՆ:

* *

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԿԸ ՓՈՒԹԱՅ ՅԱՅՏԱՐԱՐԵԼ ԹԷ «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏ ՏԻՍԱՐ ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ ԱՅՍ ՕՐՈՒԱՆԷ ՍԿՍԵԱՎ ԴՈՒՂՂԱՆ Է «ՆՈՐ ՕՐ»-Ի ԽՄԲԱԳՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԷՆ:

22 ՍԵՊՏ. 900

* *

«Նոր Օր»-ի վարչությունը կը խնդրէ Արասաճմանի ու կովկասի արգոյ բաժանորդներէն որ հաճին պահանջել կրկնողով մը «Նոր Օր»-ի պակաս ստացուած թիւերը, որոնք պիտի դրկուին անմիջապէս:

Նոյնպէս կը խնդրուի «Նոր Օր» ստացող բոլոր կովկասի հայ թերթերու ու Հանդէսներու Պատ. խմբ. բազմութիւններէն որ իրենց հրատարակութիւնները փոխանակին «Նոր Օր»-ի հետ:

ՍՈՒԼԹԱՆԻ ՔԱՆԵՒՅԻՆԳԱՄԵԱԿԸ

ԵՐԼՏԸՉԻ ԲԷՕԵԿԸ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ՏՐՏՈՒՆՉԸ

(Շար. Ոստորոգ թիւէժ)

Չենք կրնար կարծել որ եթէ Սուլթանի անձնական զանձը այդ կարմիր ոսկիներովը լեցուած չլլար, իւր թագաւորութեան տարիներն այնքան կրկար ըլլային: Գրամով շինուեցան Երջուղի պալատին այն պարտէզներն, 1876ի այդ ամսոյ լեռներն ու ձորերն, որ քիչ ատենուան մէջ վերածուեցան զմայլելի բերդաքաղաքի, մէջէ մէջ պարիսպներով շրջապատուած, որուն շուրջը կը հսկեն

տիւ և զիշեր տան և հինգ հազար պահակ զօրքեր: Անդին նախարարութեան և Բ. Գրան պաշտօնատարք ամիսներով ամսական չեն ստանար. Ճիտաբէ բանակի զօրքերը զիրար անօթութենէ և սովէ կը փարատեն: Հո՛ւ, Երջուղի պալատան շուրջը հսկող զօրքերէն սկսեալ մինչև բարձրաստիճան պալատականներն կը ստանան ճոխ ամսականներ, և կը կաշառուին պախլիճներով, պահելու Սուլթանին կեանքն անասան:

Բայց պալատի այդ պարիսպներն ու զայն շրջապատող զօրանոցներն արդե՞ք կրնային վայրկեան մը դիմադրել ժողովրդեան կամքին, եթէ ժողովրդին մէջ գտնուէին ճշմարիտ հայրենասէրներ. արդարև Սուլթանը ի վաղուց անտի ըմբռնած էր իւր թուրք հայրենակիցներու տկար կողմը. լաւ համոզուած էր որ ափ մը կաշառք բաւական էր Մուրատ պէյի նման ինքնակոչ հայրենասէրներ վայրկեան լսեցնել:

Բայց և այնպէս պակաս եղած չեն նոյն ինքն Երջուղի պալատին ծոցէն զանազան դաւադրութիւններ իւր գահուն և կեանքին դէմ, որոնք փորձուեցան մերթ հարէմի կիներու միջոցաւ, այսօր ծովու տակ խեղդուած մերթ պալատին շուրջը հսկող Չէրքէզի զօրքերու կողմէն, որոնք խումբով աքսորուած. երբեմն ալ Երջուղի պալատը շինուած լճին մէջ ծովային պտոյտներ ըրած պահուն:

Սուլթանը յաղթեց այս ամենքին. մինչև իսկ, թէպէտև չ'ներէին արդէն կրօնական սովորութիւններն, աղօթատեղին փոխադրել տուաւ իւր պալատին ճիշդ դիմացը, ուր կ'երթայ ամեն ուրբաթ աղօթելու. որովհետև կրօնը կը պահանջէ որ Սուլթանը ամեն ուրբաթ օր պաշտօնապէս և իբր խալիֆա երթայ աղօթէ մզկիթ ժողովրդեան ներկայութեան: Ահա՛ 1881էն ի վեր Սուլթանը շարունակաբար անշուղ կը կատարէ իւր Սէլամըքի արարողութիւնը. այդ հաշուով Սուլթանը տարին միմիայն երկու անգամ տեսնելի կ'ըլլայ իւր ժողովրդին. զխաւորաբար խրոջայի շէրիֆի օրն կամայ ակամայ պարտաւոր է երթալ համբուրել Մարգա-

րէին վերարկուն՝ թօփ-Գարուի պալատը որ Երջուղի պալատէն երկու ժամ հեռու է. ատկէ դուրս ժողովուրդը զրկուած է իւր վեհապետին երեսը տեսնելու. նա միշտ վանդակին մէջն է, և կը խորհի միշտ իւր անձին ապահովութեան միջոցներուն վրայ, որոնք 1882ին գրեթէ կատարելագործուած են, և արդէն 1882էն կ'սկսի Սուլթան Համիտի վարչական գործունէութեան շրջանը, որուն վրայ պիտի խօսինք: 1876—1882 միշտ ներքին և արտաքին խռովութեանց տարիներ եղած են. այդ անջրպետին մէջ Սուլթանը իր գոյնը չ'ստացայ տուաւ:

Պոստիոյ և Հերձէկովինի ժողովուրդն երբ 1876ին ապստամբեցաւ, բոլոր զբացի ազգերն Պուլկարիա, Մուրտվալիա, Սերպիա որոնք Սուլթանի գերիշխանութեան ներքև կը կառավարուէին, իրարմէ քիչ շատ առանձնանորհեալ գրութեամբ, օգտուելով թուրքիոյ ազատ միջնորդութեն, գլուխ վերցուցին թրքին դէմ. Սուլթան Համիտ առանց վճատելու երևոյթն ունենալու, որ արդէն իւր նկարագրի առաւելութիւններէն մին է, քաշեց թուրք ու մերձեց գրիչը. ճանշալ ուղեց այդ ազգերու ազատութիւնը միայն իւրեանց արեանը մէջ. սկսաւ պատերազմը. շարունակեց ամիսներ, վերջապէս, չերկարնք հանդարտեցաւ ամեն ինչ, երբ առաւօտ մ'էր երեցաւ Պոլսոյ մայրաքաղաքէն երկու ժամ հեռու Մարմարայի ծովեզերքը Սան-Սթեֆանօյի դաշտին վրայ ոռոսական զօրաց անթիւ բանակ մը, յոգնած ու թմրած հանգչեցաւ այդ բանակն, հոն իւր թնդանօթիքովը, զոր սարսափահար դիտեցին հեռուէն Կ. Պոլսոյ բարձրաւանդակ պարիսպներն, որոց ոյժին առջև ակնածեցան այդ անմատչելի բերդերն, որոց ժայռերը մէկ բառով կրնային փշրուիլ ու խորտակիլ ոռոսական թնդանօթիքն ուսակ:

Վերջապէս ընդմիջեցին օտար տէրութիւններն, քաշուեցաւ ոռոսական բանակը, կըրուեցաւ 1878ի Պէլլինի դաշնագիրը, որ տուաւ աղատութիւն Պուլկարին, Ռումանին, Սերպիան և ինչ որ իշխեն անկախօրէն իրենց երկիրներուն վրայ. գալով Հայուն, ազա-

տութեան պարզ խոստում մը միայն տրուեցաւ անոր, զրաւոր յօդուածի տակ, որով պիտի բարենորոգուէին Հայկական նահանգները, ինչ ինչ առանձնանորհումներով, որոնց պէտքը պաշտօնապէս չեշտող տուաւ 1878ի հայոց պատերազմը ներքէս վարժապետան, Պէլլինի վեհապետովին պաշտօնական գրասեղանին վրայ:

Սոյն փութկոտ նախաձեռնութիւնը որ ազգասիրական եռանդի մը սպասարկութեանը տակ գործուած էր, եղաւ ներքէսի դիւանադիտութեան մէկ սխալն. դա բացաւ նոր խնդիր մը որ արթնացուց կանախէն Սուլթանի միտքն ու ոգին, որու վրայ դարձաւ վերջնայն բոլոր ուշադրութիւնը. դա ոչ նուազ առիթ տուաւ տէրութեանց շահեկան մրցումներուն. բայց և այնպէս խոստովանիմք որ այդ սխալը չը կրնար դատարարուիլ այն մեղադրելի սխալներու կարգը, զոր գործեց Սալիպարիի դիւանադիտութիւնը 1896ի շինական պատերազմին առթիւ. ինչ որ եղաւ Չէկուրլէնի սխալը թրանսպալի պատերազմին մէջ, որ հակառակ իր յաջող ելքին իւր 30000 հոգոյ կորուստն և 70,000,000 ոսկիներն չը պիտի համագաւառուսանեն արդիւնքին:

Ինչ եղաւ սխալը: Ներքէս վարժապետան, առանց չըջահայեաց ըլլալու, կատարեալ հաւատք ընծայեց դիւանադիտական խոստումներուն վրայ, որոնք ինչպէս յայտնի է շահու և երևմտական խնդիրներն, և առանց զգալու թէ վշտացուցած կ'ըլլայ իւր զրացի Ռումանի որ միշտ թրքին գերիշխանութեան տակ ազատ ազգերուն փրկարարն եղած է, գնաց Անգլիոյ դերիւր նետեց Հայուն ապագային տպահալութիւնը: Անգլիան Պէլլինի վեհապետովի մէջ՝ տանձնեց բարենորոգումները Սուլթանի գործադրել տալու պաշտօնն, ու առ ի երաշխատարկութիւն և իբր բաժին Սուլթանէն ստացաւ կիպրոսն: Հետզհետէ Պուլկարն, Ռումանն ու միւսն առին իրենց ուզածն մեկնեցան, Բայց հայուն բաժինը 66 երրորդ յօդուածին մէջ լոկ խոստում մը զոր գործադրել Սուլթանի կամքէն կախեալ մնաց ու կը մնայ: Ահա՛ Հայուն տրտունջը:

(Շարունակելի)

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Լսարան-Ընթերցատուն ընկերութեան Ընդհանուր Բ. նիստը տեղի ունեցաւ կիրակի 23 Սեպտ., Լսարան-Ընթերցատան շէնքին մէջ. որուն մանրամասնութիւնը յառաջիկայ թրուով կը հրատարակուի:

— Կը լսենք թէ Ազգ. Խորհրդանան վարժարանի հոգաբարձութեան մարմինը կազմուած չըլլալով, Ազն. կարապետ պէյ շէրիտեան, պիտի վարէ այդ վարժարանի հոգաբարձութիւնը, ցնոր անօրինութիւն:

— Նոր Օր»ի վարչութիւնը հետեւալ նախապէս զիտուելու է Ընդհ. Ժողովոյ Մայր-Դիւանին՝ Տիր Սմբատ Բիւրատի գաղափարն առթիւ:

Մեծարոյ

Ատենապետ առժամայ Մայր «Դիւանի»

Ընդհանուր Ժողովոյ Լսարան Ընթերցատուն ընկերութեան

յ Աստ

Մեծապատիւ Տէր

Այս օրուան ընդհանուր Ժողովոյ նիստին առիթէն օգտուելով կը փութամ պարզապէս առ ի գիտութիւն Լսարան-Ընթերցատուն ընկերութեան անդամոց և բոլոր յարգելի ազգայնոց որք կը հետաքրքրուին «Նոր Օր»ի խնդրով, հաղորդել վարչութեանս յետագայ կարեւոր որոշումը 22 թուականաւ, որ յոյս ունիմ թէ պիտի կրնայ ծառայել «Նոր Օր»ի նիւթական ու բարոյական շահերն ապահովելու:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

«Վարչութիւն» կը փութայ յայտարարել թէ «Նոր Օր»ի խմբագրապետ Տիր Սմբատ Բիւրատ այս օրուանէ սկսեալ դադարեալ է «Նոր Օր»ի խմբագրապետի պաշտօնէն»:

Վարչութիւնս սոյն պատճառով անդամներէն մին, իբր մնայուն խմբագիր, պիտի խմբագրէ և սրբապրէ յօդուածներն աչալուրջ կերպիւ. իսկ միւս երկուքն անձուրբաբար պիտի աշխատին, ներկերով թերթին յօդուածներ:

Վերջապէս սոյն յանձնախումբը որոյ կազմակերպութեան և իրաւասութեան սահմանի մանրամասնութիւնը «Նոր Օր»ի յառաջիկայ թրուին մէջ պիտի հրատարակուին պաշտօնապէս պիտի աշխատի օժտել թերթը խնամեալ և հմտալից խմբագրութեամբ մը մնալով մշտ հաւատարիմ վարչութեանս գծած ծրագրի ուղղութեան և հիւրընկալել ամեն յօդուածներ որոնք կը ծառայեն «Նոր Օր»ի բարոյական մակարդակն բարձր պահելու. հետի շահագործելու «Նոր Օր»ի թանկագին սինակներն՝ յօդուած անձնա-

կան կիրքերու, հետի թեւեւութիւն վարչութեան իրաւասութեան կախեալ ներքին և արտաքին խնդրոց մէջ. որոնք շահագործուելու են թակայ չեն կրնար ըլլալ:

Վարչութիւնս որոշեց, ուղղել Պատ. Դիւանին զներկայս, որպէսզի հաճիք Ժողովոյ ներկայութեան ընթեռնուլ տալ:

Մնամ յարգանք

Քարտուղար-Ներկայացուցիչ Վարչութեան «Նոր Օր»ի

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

ԼՈՐՏ ԲՕՊԵՐՉԳ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՐԱՆՍՎԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԱՌԹԻՒ

ԼՈՆՏՐԱ 14 Սեպտ. — Լորտ - Ռօ պէրձ օգտուելով Նախագահ Գրիւկէրի մեկնումէն հրատարակ հանեց հետեւեալ յայտարարութիւնը.

«ՄԱՋԱՏՕՏՈՐՓ 13 Սեպտ. — Հրամայեցի չըլարելու իմ հանել հետեւեալ յայտարարութիւնը անգղիերէն և հոլանտերէն տպագրութեամբ երկրին ամեն կողմը:

Նախկին Նախագահ Գրիւկէր և Պ. Ռէյց միասին ունենալով Հարաւ-Ափերիկեան հանրապետութեան յիշատակարաններն, անցան Բորթուգալեան սահմանադրութիւն և հասան Լորէնձօ-Մարբէջ, ուրկէ մտադիր են մեկնել մօտերս դէպ ի Եւրոպա:

Ուրեմն Պ. Գրիւկէր լքած է բացորոշապէս Հարաւ-Ափերիկեան հանրապետութեան նախագահի պաշտօնը՝ խզելով այսպէս զինքը թրանսվալի միացնող պաշտօնական կապերը և կարծիք կը յայտնէ թէ յուսահատական է այն պայքարը զոր կը մղէ գրեթէ տարիէ մը ի վեր:

Պօէրներու դատին այս լքումը ապացոյց մը կրնայ ըլլալ իր հայրենակիցներուն թէ անօգուտ է իրենց համար այլ ևս կոտայ շարունակութիւնը:

Թրանսվալի և Օրանձ գետի գաղթականութեան բնակիչներն կ'որբան առ այժմ կորուստը 15,000 հոգիներու, որոնք պատերազմի գերիներ են, և վստահ են թէ անոնցմէ և ոչ մին ազատ պիտի արձակուի՝ ցորչափ անպայման անձնատուր չըլլան որոնք որ մեզ գէմ գեռ զէնք կը գործածին:

Պուրկէրները պէտք է այս պահու լաւ բարձր են որ օտար տէրութիւններու կողմանէ ունէ միջամտութիւն կարելի չէ իրենց դատին ի նպաստ. բաց աստի, Բրիտանական կառավարութիւնը որոշած է վախճանին հասցնել սկսուած գործը և վերջացնել իրեն համար այնքան սուղի նստած այս պատերազմը, որ անգին արեան և թանկագին անձինքներու աղէտ մը եղաւ. պատերազմ մը զոր հրատարակեցին նոյն ինքն թրանսվալի կառավարութիւնն և Օրանձի ազատ պետութիւնն, ուրկէ յաջող ելք մը կարող չեն սպասել Պուրկէրներն:

Այս մասին եթէ ունէ կասկածներ գոյութիւն ունենան իսկ Պուրկէր մշտըրներուն մէջ, պէտք է որ գաղբին այլ ևս գոյութիւն ունենալէ և փարատին, քանի որ իրենց երկրը առ այժմ կը գրաւէ Նորին վեհափառութեան անգղիական բանակն, քանի որ արգէն 24 Մայիս և 1 Սեպտ. թուա-

կիր յայտարարութիւններով յանուն Նորին վեհափառութեան ծանուցած էի թրանսվալի և Օրանձի երկրներու կցումը:

Առիթէն օգուտ կը քաղեմ Ձեզ դիտել տալու համար թէ ի բաց առեալ այն փոքր երկիրն զոր կը գրաւէ Պօէր զօրաբանակն, ընդ հրամանատարութեամբ Պօթա զօրավարին. պատերազմը հետզհետէ վատթարանալու մօտ է՝ շնորհիւ պետերու որոնց հրամայած խումբերն մեծաւ մասամբ աննշան են:

Թերի եղած պիտի ըլլայի իմ պարտականութեանց մէջ հանդէպ Նորին վ. կառավարութեան և իւր Հարաւ-Ափերիկեան բանակին, եթէ զանցառութիւն ընէի այսպիսի անկանոն պայքարի մը վերջ դնելու:

Այն միջոցները զոր հարկադրուած եմ ընդունելու՝ պատերազմական սովորութիւններու վրայ հիմնուած են:

— Պ. Գրիւկէր, թրանսվալի հանրապետութեան նախագահ, որոշած է այցելութիւն տալ Եւրոպական տէրութեանց պետերուն:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՇԱՐԳԻՅԷ» ԱՐԿԱՆԸ

Անցեալ թուով ինչպէս որ ծանուցած էինք, իւրեքվալկան Մէյլ ընկերութեան շոգենաներէն «Շարգիյէ» որ Պոլսոյ և Աղեքսանդրիոյ գծին վերայ երթեկութիւն կընէր, փերէի կողմը Անդրոս կղզոյն մօտ՝ կատաղի փոթորկէ մը բռնուելով, հակառակ հասած օգնութեանց, զոր Յունական կառավարութիւնը փութացուցած էր, հինգ ժամուան ճիգերէ վերջը, անկարելի եղաւ փրկութիւն ու ընկղմեցաւ. բարեբաղդաբար «Շարգիյէ» Աղեքսանդրիայէն մեկնած պահուն, մեծ թուով ճանապարհորդներ առած չէր, բայց և այնպէս կորուստը մեծ ու ողբալի է. ըստ վերջին հետազոտիչներու, պակտող ճամբորդներուն թիւն երեք է, Աճմէտ պէյ Ասիմ, իզպալ հանրմ, Ժօզէֆ Ապօֆ, նմանապէս նաւուն բժիշկը և նաւաստիներէն քսան և մէկ հոգի կը պակսին:

Յունական լրագիրները անաչառութեամբ կը քննադատեն «Շարգիյէ»ի նաւաստիներուն վատութիւնը, որոնք պէտք եղածին պէս ջանք ըրած չեն ճամբորդներու փրկութեանը համար: Նաւապետին հրամաններն մտիկ ըրած չեն և միայն իրենց կեանքը փրկելու համար մակոյկ մը գտնելով, փախուստ տուած են:

ԼՈՐՏ ԳՌՕՄԷՐ. — Հետզհետէ հաստատութիւն գտնելու վրայ է այն լուրը թէ՛ Անգլիական կառավարութեան Եգիպտոսի Դիւ. գործակալ, և ներկայացուցիչ Լորտ Գոսլէր, թիրևս ստանձնէ Անգլիական Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնը զոր պիտի յանձնէ Նախարարապետ Սալզբըրի Գապիլէի նոր կազմակերպութեան առթիւ:

Հետեւաբար Լորտ Գոսլէր Գահիրէ պիտի գայ, պարզապէս այլ և այլ առկախ խնդիրներ կարգադրելու համար, ու վերջոյ պիտի վերադառնայ Անգլիա:

Կըսուի թէ՛ Լորտ Գոսլէրի յաջորդն պիտի ըլլայ Բէնէլ Ռոտ, տեղւոյս անգլիական գործակալութեան առաջին քարտուղարը:

— Զօրապետ մը Աթենքի մէջ, գահաժառանգ իշխանին կառքը կեցնել տուաւ. ձեռքակալուեցաւ որուն վրայէն ընկալուէր մը գտան:

ԱՐԵՒԵԼՔԻ ԶԻՆԵՐԸ

(Շար. թիւ 30 է և վերջ)

Զրոյց կը պտտի թէ՛ Սուլթանը բացարձակապէս կը մերժէ Հայկական հեռացնել այդ անհատը, և մեծ ամօթ մը պիտի ըլլայ (և միանգամայն վտանգաւոր) եթէ գեապանները Սուլթանին տեղի տան այս խնդրի մէջ:

Գաղանապէս պատրաստելով հանդերձ, Կիլիկիոյ ապագայ շարգերը, Սուլթանը կ'օգտուի տէրութեանց Ձինաստանի մէջ ունեցած շփոթներէն, նորանոր շարգերու նըշանը տալու համար Հայաստանի մէջ: Այս կերպով հրամայեց Սրադանքի Հայոց բնաջնջումը Սասունի մէջ, աղեկաբար պարագաներու տակ: Հակառակ Գրան հիւրման, իրողութիւնը հաստատուած է վանայ ու կարնոյ հիւպատոսներուն տեղեկագիրներով: Ինչպէս մշտ, այս անգամալ իշխանութիւններ կը յայտարարեն թէ՛ յեղափոխականներ ձեռք անցուցած են, միջոց իրօք, անմեղներ կը մերթնէ. ձեր, կին, աղայ: Անգլիական, ֆրանսական և ռուսական դեսպանները Գրան ուշադրութիւնը հրաւիրեցին Հայաստանի այս պօքրբերն խօգտութեանց վրայ:

Մաղթենք որ, Եւրոպայի շահուն համար իսկ, իտալական դեսպանը, և մանաւանդ Գերմանական ու աստրիական նորոտները, իրօքն բռնին իրենց միւս պաշտօնակցաց ընթացքը: Ժամանակն է որ եւրոպական դեսպանութիւնը հասնայ — եթէ զեռ չը դիտեն — որ մէն մի հայկական շարք՝ թուրքիոյ համապատասխանող կողմէն ցոյց մէ հակաքրիստոնէական և օտարաբնուականը կը կազմեն ահապին մեծամասնութիւնը ցեղին, ընդդէմ Երիտասարդ-Թուրք կուսակցութեան, որ լուսամտ փոքրամասնութիւն մ'է: Այս կրօնամոլները կ'ատեն Եւրոպացիները և չը պիտի վարանին իրենց տուած շարքերը դիմակաղերմ ընելու այն օրն որ ինքզինքնին բաւականաչափ հօգը պիտի ըզզան ֆրիստոնէութեան երեսին նետելու ձեռնոցնին:

Զինու Պօքրբերն թուրքիոյ Սօփաներէն աւելի շեքմեանը հիացողներ չունին: Հետեւալ հեռագիրը, վերջին Օգոստ. 13 թուականով Ժոր Բիլիէ անուած, կը մատնէ ներքին տրամադրութիւնները Ժողովրդի մը, որ իր անպատիւ մնալն ապահովող կառավարութեան մը հիւպատոսներուն վրայ կը յարձակի:

«Վանէ 13 Օգոստոսին քաշուած հեռագիր մը կ'իմացնէ իմ անց. փոխ-հիւպատոսն որ կուսակալութեան կեղծութիւնը կ'երթար, էլ չէր թող յարձակում կրած է 10 զինեալ թուրքեր: Թարգմանը վերաբերուած է, և զոյգերը թալուած: Փոխ-հիւպատոսը յաջողեցաւ վան մանկ ողջ առողջ: Անմիջապէս այս յարձակման լուրը հաղորդեց իշխանութեանց. որոնք զօրագնակը զրկեցին հալածելու աւազակները: Անգլիական դեսպանը այս մասին դիտողութիւններ ուղղեց Իրան, յանցաւորաց պատժուիլն ու զոյգերուն հետ տրուիլը պահանջելով: Այս առթիւ կ'ըսուի թէ՛ Տիրանակերտի ֆրանս. փոխ-հիւպատոսն որ իսկիւնուէր կ'երթար, յարձակում կրած է թուրքէ մը, որ իր վրայ պարպած է հրացան: Հակառակ ֆրանս. դեսպանատան բողոքներուն, ոճրագործը չէ՛ ձերբակալուած:

Ահա՛ արեւելեան չարիքն առաջին անգամ անհիշերը:

ԼՄՄԷՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՒՆՆԵՐ
ԱՂԵՔԱՆՆԵՐԻՆՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵ-
ՐՈՒՆ ՎՐԱՑ

(Շարունակութիւնն նախորդ թիւէն)

Այսպիսի անբաժանելի կերպով խառնուած
սեռանկով ընկերութեան խնդիրն իմ անուանու
հետ, և ըլլալով ընկերութեան վերակազմու
թեանն ի վեր մտան տեղեակ անոր ամեն
գործոց, տեղական ազգային շրջանակին մէջ
պաշտօնական հանգամանք կրող անձի մը
կողմէ հրապարակ հանուած այս պատմու
թեանց վրայ փոստածու ըսել, անհերքելի
ապացոյցներով, կրկին պարտականութիւն մը
կազմեցին, թէպէտ շատ ակամայ յերաւի:
Լուսթիւնը, գուցէ չարաչար մեկնուելով
կարենար սխալ ենթադրութեանց տեղի տալ
անտեղեակ ոմանց որք իբրև զուտ ճշմար
տութիւն իրենց ներկայացուած աստիճան
ները չհերքուած տեսնելով թերևս փորձ
ուէին նկատել զայն իբրև անհերքելի և
վճարական:

F,

Ինչպէս որ Տ. Լ. Մկրտչեան կ'ըսէ Տ,
Հայկ Էջիզդէր թաղական խորհուրդն և որ
նախահանութիւնն ունեցաւ՝ 1893էն ի վեր
հաստատեալ բայց երկար ժամանակ մ'ի
վեր կազմուածեալ վիճակ մէջ գտնուող
Աղք. բարեգործական ընկերութիւնը վերա
կանգնել, երբ զաղթականաց և տեղացւոց
հոգը յիշեալ թաղական խորհուրդին վրայ կը
ժանրանար բոլորովին:

Յիշեալ թաղական խորհուրդը 7 Գեկտ.
97ին Աղքեսանդրոյ ամեն ծանօթ ազգայ
նոց մասնաւոր նամակներով հրաւեր կար
դաց թաղային ընդհանուր ժողով մը կազ
մել Աղք. ընկերութեան կազմուածեալ վի
ճակին վարման մը գտնելու համար:

Նիստ Ա. — 12 Գեկտ. 97(*)

Հրաւիրեալներէն տասն անձեր միայն հա
ւաքուեցան Առաջնորդարանի սրահին մէջ,
այս թուոյն մէջ թաղ. խորհրդոյ կողմէ
Տ Հայկ Էջիզդէր միայն գտնուելով: Ներ
կայութեանց անբաժանելիութեան պատճա
ռաւ ժողովը յաջորդ կիրակիին յիտաձք
ուեցաւ:

Նիստ Բ. — 19 Գեկտ. 97

58 Հրաւիրեալներ վրայ ներկայացան 23
անձինք, ընդ որս թաղական խորհրդոյ
կողմէ Տ. Տ. Յ. Մուրճաֆեանց և Ա. Ճե
վահիրեան:

Վերստին ներկայից թիւն անբաժանական
ըլլալով թաղային ընդհանուր ժողովի հան
գամանքը տալու համար այս գումարման,
հրաւիրեալը մեկնեցան խնդրելով թաղա
կան խորհրդոյ ներկայացուցչներէն վերջ
նական և ստիպողական հրաւեր մը ուղղել
թէ ընկերութեան նախկին անդամոց 7 թէ
ընդհանուր թաղեցոց:

Նիստ Գ. — 4 Յունուար 98

Այս անգամ 33 անձինք անձամբ և 2
անձինք նամակաւ պատասխանած ըլլալով
թաղ. խորհրդոյ հրաւերին, ներկայութեանց
թիւը բաւական նկատուեցաւ և ժողովը, ա
տենապետութեամբ Տ. Ա. Ճեվահիրեանի,
խորհրդակցութիւններ կատարեց օրակարգի
ծանօթ խնդրոյն վրայ:

Այս նստին մէջ էր որ տեղի ունեցան

(*) Տպագրական սխալ մ'է հաւանական
մաքար՝ որ ըսել կուտայ յօդուածագրին
թէ 1899 տարուոյն վերջերս է որ այս ժո
ղովները տեղի ունեցան:

Ներմ ընդհանուրութիւններ թաղական խոր
հրդոյ վէճ, թաղեցոց ցոյցած ակներև ան
տարբերութիւնը՝ յիշեալ խորհրդոյ նկատ
մամբ ընդհանրապէս տիրող գեղեցութեանց
վերադրուելով իրաւամբ: Խիստ ազմկայող
նիստ մ'իղաւ այս, որուն մէջ ոմանք բու
լորովին անտես ընկելով անոր բուն և միակ
նպատակը, «պարզէն թաղական խորհրդոյ
մը» պաշտօնավարութիւնը թողարտուած
ատեն ունեցէ ուրիշ ազգային գործի ձեռ
նարկութիւնը անհերքելի նկատելով կը հրա
ւիրէին ժողովականները նախ և առաջ յի
շեալ խորհրդոյ հրաժարեցուցման նպատա
կին նուիրել իրենց ջանքերը, և այնուհետև
միայն զբաղել ընկերութեան վերակազմու
թեամբ:

Այս յոսի գրութեամբ առաջ տարուած
յուզեալ վիճարանութիւններ կը սպասային
այս անգամ ևս բոլորովին ապարդիւն գոր
ծել ժողովը: Բոլոր ներկայը կրնան վկա
յել ընդ որս նոյն ինքն Տ. Լ. Մկրտչեան,
որ այս պարագային մէջ բաց ի այս վեր
ջինն, որ ջերմասկէ կը պաշտպանէր թա
ղական խորհուրդը, ոչ որ ինձէ աւելի ազ
գու և յարատև կերպով չմտաբեցաւ՝ ժո
ղովը իր նպատակէն շեղեցնելու և այն
երբորդ նիստն ալ Աղք. ընկերութեան վե
րակազմութեան համար ապարդիւն թողու
ուողութեան դէմ:

Տ. Լ. Մկրտչեան կը սխալի անշուշտ
այս վարմունքը վերագրելով «թաղականեան
զգացմանց» (*) որք իբր թէ յետոյ Ներմ
«հակաթաղականեան» դարձած են եղեր:

Վերջապէս յաջողուելով համոզել ընդդի
մախօսներն որ ի փնտ կարտեղոց չշփո
թեն երկու տարբեր և իբրամբ անկան խըն
դիրներ, և այս մասին Տ. Յ. Մուրճաֆե
անի աննախապաշարեալ և վեհանձն շար
ժուին և ողջխտն յայտարարութիւնները
զօրացնելով մեր թշուառ եղբարց դատը,
ժողովականը վերագրեալն համաձայնու
թեամբ օրուն խնդրոյն և ընտրեցին յանձ
նախումբ մը որոյ պաշտօնն տրուեցաւ «Ըն
կերութեան նախկին կանոնագրութիւնը ըրն
«նութեան ենթարկելով հարկ դատուած սըր
«բագրութիւններն և բարեփոխումներն ի գործ
«դնել և յաջորդ նստին ներկայացուել զայն
«ի վաւերացումն»:

Նիստ Դ. — 21 Յունուար 1898

«Ատենապետութեամբ Տ. Յ. Մուրճաֆե
«եանցի և ի ներկայութեան 37 անդամոց,
«ժողովը յօդուած առ յօդուած վիճարանե
«լով Յանձնախմբին կողմէ պատրաստուած
«կանոնագրութեան վրայ յետ եօթն սրբա
«գրութեանց ամբողջապէս ընդունեց զայն
«որ այս ձևին մէջ բոլոր ներկայից ստո
«բագրութիւններով վաւերացաւ»:

(*) Ցաւօք սրտի ստիպուած եմ հրա
պարակաւ յայտարարել այս անթիւ թէ,
չորս տարի է ի վեր որ այս երկիրս կը
գտնուիմ, տակաւին կարելի չ'եղաւ ինձ,
որքան ալ կը փափաքէի և կը փափաքեիմ
միշտ ի բոլոր սրտէ, «թաղականեան» մը
ըլլալ: Որչափ որ տեսած եւ լսած եմ միմ
չեւ այսօր, Աղքեսանդրոյ թաղական խոր
հուրդներու ըմթացքը և վարմունքը՝ ո՛չ
միայն չեմ եղած գոմէ՛ թաղեցոց մէկ
կարևոր մասին հաւանութեանը կամ հա
մակրութեանը արժամի, այլ մամաւանդ
իրենց գոյութեան և պաշտօնավարութեան
պայմաններն ևս քան զևս բացարձակապէս
անհամարձայն եղած եմ տիրող ազգի մ
ընթերթ. օրէնք՝ որմէ նուիրագործուած
այս պաշտօնը կարծես թէ անպատեալ
պահանջէր ուսմակոյն ընել ազգայնոց բո
լոր իրաւունքներն և մոյմ իմքն Սահմա
նագրութեան ամենէն հիմնական և ամենէն
տարրական սկզբունքները:

Այնուհետև տեղի ունեցան, ըստ նոր
կանոնագրի, Ընդհանուր ժողովոյ Գիւանի
չորս, և Տնօրէն ժողովոյ եօթն անդամոց
ընտրութիւններն:

Նիստ Ե. — 27 Փետր. 1898

Այս նիստը տեղի ունեցաւ ընդ ատե
նապետութեամբ Տ. Աղքեսան Ճեվահիր
եանի և ի ներկայութեան 24 անդամոց:
10 անդամներ ալ փոխանորդագրեր զրկած
ըլլալով ներկայութեանց թիւը համարուե
ցաւ 34, որ մեծամասնութիւն կը կազմէր
անդամոց ընդհանուր թուոյն վրայ որ էր 58:

Ընդամենը ժողովոյ Գիւանի նորընտիր
Ա. և Բ. Ատենապետները հրաժարած ըլ
լալով, անոնց տեղ նորոգ ընտրութիւններ
կատարուեցան:

Նիստ Զ. — 13 Յունուար 1899

Ընդ ատենապետութեամբ Բ. Ատենա
պետ Տ. Ա. Ճեվահիրեանի և ներկայու
թեան 27 անդամոց:

7 Անդամներ փոխանորդագրեր զրկած ըլ
լալով ներկայութեանց թիւը համարուեցաւ
34:

Ընկերութեան ընդհանուր անդամոց թիւն
էր 74, բայց ատեն մէջ 7 զոգաբէն ըլլալով, ըստ
10րդ. յօդուածոյ կանոնագրութեան՝ 67 ան
դամոց թիւը հիմ ընտրուեցաւ և այսպէս հա
զիւ ժողովոյ օրինաւորութեան պահանջած
մեծամասնութեան գոյութիւնը հաստատուե
ցաւ:

Այս նստին մէջ էր որ Տ. Ա. Ճեվահիր
եան գուցէ մահն ընկերութեան բարերար
բարձր. Եւուպար փաշայի որոյ յիշատակին
յարգանաց վերջին ցոյց մ'ըբաւ ժողովն և
որոշեց անմիջապէս յատուկ հետազոտ և
նամակներով յանուն ընկերութեան ցաւակ
ցութիւններ յայտնել Անուաշուք Տիկին
Եւուպար փաշայի և Վսեմ. Պօղոս փաշա
Եւուպարեանի:

Այնուհետև, ըստ սովորութեան, օրա
կարգի խնդիրները ձեռք առնելով:

Ա. — Նախորդ նստի ատենագրութիւնն
ընդունուեցաւ միաձայնութեամբ:

Բ. — Ընդհանուր ժողովոյ Գիւանի հը
րաժարեալ Ա. Ատենապետին տեղ՝ ժողովա
կանաց միահամուռ ընտրուեցաւ Տ.
Տօգղ. Պ. Մախոխեան:

Գ. — Գինի յանձնաժողովոյ ընտրու
թիւնը կատարուեցաւ:

Դ. — «Եկատուին հրաժարականաց Տը
«նօրէն խորհրդոյ հինգ անդամոց»:

«Կարգացուեցաւ Տնօրէն խորհրդոյ ան
«գամներէն Տիարց Լեոն Պերպերեանի, Դա
«գարոս Ատրուսի, Տօգղ. Միսակ Ժամա
«կոչեանի և Պերճ Օհանեանի պարզ հրա
«ժարականները և Տ. Ետուարդ Թուրքոնեա
«նի պատճառաբանեալ կրկին հրաժարակա
«նը: Այս վերջինը վիճարանութեան տեղի
«տուաւ, ըստ որում Տ. Թուրքոնեան Տնօ
«րէն խորհրդոյ Գիւանեմբեր 11ի նիստին մէջ
«պատահած ցաւալի դէպք մը կը յիշատա
«կէր անոր մէջ, և երկիւղ կը յայտնէր թէ
«նմանօրինակ պատահումներ կրնային կրկ
«նուիլ Տ. Ատենապետին՝ ժողովոյն կարգա
«պահութիւնը անօրի պահուելու մասին
«ցոյց տուած թուլութեան հետեանօր»:

Այս վիճարանութեանց անթիւ բացատ
րած եմ ժողովոյն թէ ինչ էր Տ. Թուրքոնե
եանի նամակին մէջ ակնարկած ցաւալի դէպ
քին էութիւնը:

Տ. Լ. Մկրտչեան, չ'զիտեմ ինչու, ըզ
գուշանալով այս դէպքին և անոր հետեւող ի
րաց վրայ բառ մ'իսկ զնեղ իւր սակայն ու
րիշ անկարևոր կէտերու վրայ չ'ափազանցօրէն
երկարապատում նկարագրութեանց մէջ, հե
տեալ խօսքերով կը սահմանեց վրայէն:

«Եւ պատահեցաւ Աղք. ընկերութեան
«Տնօրէն ժողովոյ անդամ Տիար Եւուպար
«նէս Ետուարեանի ջրային հիւանդութեան
«ենթակայ ըլլալը թիւ յետոյ հաստատուե
«ցաւ իր ընկերութեան կողմէ (*), ու
«որնք իւր հիւանդութեան ասթած սրտնեղու
«թեանց բերմամբ չի կրցին հետը համա
«ձայնի ու տակաւ ասպարզելն բաշտուեցան:
«Հիւանդութիւնն որուն առժամ անդամուհու
«թեանց համար ակերթ է ըսել թէ ենթա
«կան բարոյապէս պատասխանատու չլինար
«նկատուիլ, թէ և ա'ս ալ անուրանալի է թէ
«այդ անպատահութիւններէն գործն է որ կը
«տուէ: Տիար Եւուպարեան, Ետուարեան ա
«ռանձին մնաց ժողովին մէջ. Տիար Եւու
«սէփեանի հետ որ սակայն բնաւ ժողովի
«չէր գար»:

Այն ատենի Տնօրէն ժողովոյ անդամոց
մէջ և տեղի ունեցած «անհամաձայնութեան»
սկզբնակէտը կրած էր Գեկտ. 11ի յիշեալ
«ցաւալի դէպքը» զոր պէտք բացատրեմ 'ի
ստորև, դէպք՝ որուն հետեւութեամբ, ո՛չ թէ
Տ. Լ. Մկրտչեանի «ընկերները» չի կրցին
«հետ համաձայնիլ. ու տակաւ ասպարե
«ղէն բաշտուեցան», այլ ճիշդ այդ թուա
կանէն յետոյ ևս անհամար բացարձակ
կապէս դարձեցաւ Տնօրէն ժողովոյ նիս
տերուն ներկայ գտնուել, ինձ քննախ
նարար ունկիւրէլի շրջալով յետիցե
անձնակազմ յարաբերութիւն ունենալ
այլ ևս յիշեալ «ընկերներուն» հետ:

Ուրեմն, 1898 Գեկտեմբեր 11ի կիրա
կի առաւօտեան Տնօրէն ժողովոյ նիստին
յետոյ, (որուն ներկայ էին Արժ. Գանիկ
Վ. Բարսեղեան, Տիարց Տօգղ. Միսակ
Ժամկոչեան, Ատենապետ, Ե. Թուրքոնեան,
Պերճ Օհանեան և եր), ո՛չ Տ. Թուրքոն
եան, ո՛չ ևս չներկայացանք այլ ևս երբէք
յաջորդ ո՛չ մէկ նիստին, սպասելով Ընդհա
նուր ժողովոյ գումարման որ կախում ունէր
սումարաց և ներկայալի հաշուոց պատրաս
տութեան, ինչ որ տեղի ունեցաւ, տուաւ
քննարկ Տ. Թուրքոնեանի եր ո՛չ իմ
մասնակցութեան և ոչ իսկ տեղակա
րեանի Տ. Թուրքոնեանի Գեկտ. 13ին
պատճառաբանեալ հրաժարակարգ զրկած էր
Գիւանին, 21ին զայն կրկնած, մինչդեռ եր
երբէք հրաժարած չէի, իսկ Տ. Թուրքոն
Զպուքեան բազբէն բացակայ կը գտնուէր:

Յ. ԵՆՈՒՅԵԱՆ

(Շարունակելի)

(*) Ասոնց թուոյն մէջ կը գտնուէր Տ.
Տօգղ. Միսակ Ժամկոչեան (Տ. Թուրքոն
եանի նամակին մէջ ակնարկուած ատե
նապետը), որ իբրև միակ ըմբռնող անդամ
Տնօրէն ժողովոյ, ինք անշուշտ և անվը
բէպ՝ Տ. Լ. Մկրտչեանի հաստատուած պէտք
է ըլլալ անողորմեանս մասին այսպիսի
միշտ կամ սխալ — սեղիքը թժշկին հըմ
տոթեան վրայ չէ — բացարձակ կարծիք
մը, ինչ որ ինքզինքնին յարգող թժշկաց
համար... ի՞նչ կ'ընեն ըմբռնական կեմ
ցաղազիտական և ունեցէ անտիմամի վե
րաբերող յետին թժշկին համար, ամեներե
ւի յանցանք մ'է, գեթ (secret profes
sionnel) ի տարրական պահանջմանց տե
սակէտով:

Իսկ թժշկին այս ինքնին ծանուկելու
անգաղտնապահութիւնը մինչև լրագրաց
միջոցաւ հրապարակելով աշխարհին ամեն
կողմերը, Տ. Լ. Մկրտչեան (որ սակայն
մտերմագոյն և սիրելագոյն բարեկամու
րէն մին եղած է և է միշտ Տ. Տօգղ.
Միսակ Ժամկոչեանի) իրեն համար անհա
ւատալի այնպիսի անողորմ թեմեամտու
թիւն կամ միամտութիւն մը գործած է,
որուն դէմ ամենէն աւելի պէտք է բողո
քէ մոյմ ինքն Տ. Տօգղ. Միսակ Ժամկոչե
անի, եթէ ոչ միմիայն ինքը:

Յիրաւի անախելացի բարեկամի ու հեղա
մը որ պիտի ներքէմ զրկուելու համար միայն
պիտի արժէր հազարներ վճարել:

Լ Ր Ա Ք Ա Ղ

Սուլթանի գահակալութեան 23-ամայ յոբելեանի առթիւ Պատրիարքի կողմէն մատուցուելիք թանկագին նուէրն է եղեր Պոլսոյ Տիբեղի-Թաշի սուկիէ գեղակերտ մանրանկարը: Ասկէ զատ Պատրիարքարանի պաշտօնէութիւնն ալ մտադիր է եղեր գեղակերտ արկղիկ մը:

—Ապրօ Սահակ էֆէնտին, Պետական խորհրդի անդամ, Օդոստ. 21ին մեռեր է Կ. Պոլսի մէջ:

—Հանգուցեալ Տ. Յովհաննէս Էսայանի մարմինը Պոլսի բերումը ըլլալով, մեծ շքով յուղարկաւորութիւնը կատարուեր և Բերայի Ալզային գերեզմանատան մէջ Էսայանի գամբարանը ամփոփուեր է:

—Կեսարիոյ առաջնորդ Տրդատ եպիսկոպոս, իր վիճակին Ս. Կարապետ վանքի մէջ ընդարձակ դպրոցի մը հիմունքը դրեր է Յուլիս 30ին մեծ հանդիսաւորութեամբ:

—Քէօթահայի հայ Հոռոմէականաց առաջնորդ Հ. Մանուէլ վ. որ վերջերս փափաք յայտներ էր Հայաստանեաց եկեղեցւոյ զինկը վերադառնալ՝ Պոլսի եկած և ազգային պատրիարքարան իջած է:

—Պարսից Շահին անձնական բըժիշկ Յարութիւն խան թիրեաքեան, որ ժամանակէ մը ի վեր Եւրոպա կը գտնուէր, վերադարձեր է Թէհրան:

—Թիֆլիզի մէջ երկու մահամտականներ քրիտոնէական դաւանութիւնն ընդգրկելով մկրտուեցան հայ ուղղափառ եկեղեցւոյ զաւակներ, մին Պետրոս և միւսն Պօղոս անուամբ:

ՀԷԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

—Կ'իմանանք թէ կիրակի օրուան Հելվանի վիճակահանութեան առաջին թիւն չահած է Պետրոս Մելիքեան անուն ոմն:

Le Gérant J. MUNIER

ԳԱՅԷ ԵՓՐԱՏ

Ապսին Պապ-Էլ-Պոսթան Հրապարակին վրայ եւ Նուագածուաց խմբի Զօրանցի դիմացը

ՕՂԱՆԷՍ ՄԻՄՈՆԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մէկ հատիկ Զբօսարանն է Գահիրէի մէջ, ուր կենցաղասէր մը կարենայ անցընել հաճոյսի ժամանց մը: Ապտինի ընդարձակ հրապարակին զովագին օգը, վայրին սրանչելի գիրքը, և սպասներուն մարտութիւնը, ըմպելեաց անարատութիւնը այս ամեն առաւելութիւններով ԵՓՐԱՏ ԶԲՕՍԱՐԱՆԸ քիչ ատենուան մէջ յաջողած է ունենալ յաճախորդներու պատկառելի թիւ մը, որոնք ամեն իրիկուն, ժամագրութիւն ըրած են, ու ժամերով կը վաճելն երջանիկ ընկերութիւն մը:

Ամեն կարգի զովայար, թարմ ու անխառն ըմպելիներէ զատ մասնաւոր խնամքով կը պատրաստուի ընտիր ընտիր միջոցներ օչարակ. ամենէն գրգռարահաճներն սնդամ պիտի գոհ մնան Ելիւրասէն:

ՃԱՍՏԱՐԱՆ ՀԱՅՎԱԿԱՆ

ՄԻՀՐԱՆ ԵՒ ԵՂԲ. ԳԱՋԱՆՃԵԱՆ

Շարա Ապու-Սապահ Նիեու-Տնիկեքսի լիբլարանին դիմացը:

Օղասուն ու զուարճալի գիրք մաքուր ու վայելուչ սպաս. համեղ ու ռմբարար կերակուրներու զանազանութիւնն, անխաղախ պատրաստութիւն. ճոխ ճաշացոցակ մը գիւրամաշելի գինեով. ահա՛ Գազանճեան եղբարց ճաշարանը:

Ով՛ որ կ'ուզէ, փորձի համար մէկ անգամ թող գիմէ, վստահ պէտք է ըլլայ թէ մշտակայ յաճախորդը պիտի դառնայ հայկական ճաշարանին:

ԿՈՒՋԷՔ ՈՒՆԵՆԱԼ

ՈՍԿԻ

ԿՈՌԷՆ ԼԱՐՈՒՈՂ ԽԻՍՏ ՍԻՐՈՒՆ ԵՒ ԸՆՏԻՐ

ՃԱՄԱՑՈՅՑ ՄԸ

ՄԻՄՈՆԵԱՆ 120 ՂՐՇ. ՎՃԱՐԵԼՈՎ

ԴԻՄԵՑԷՔ

ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԴԱՀԻՐԷ, ՄՈՒՄԲԻ ՓՈՂՈՑ

Ուր կրնաք գտնել նաև ՈՍԿԻ ամեն տեսակ ժամացոյցներ ու ամենազիւրաւ մատչելի գներէն սկսելով մինչև ազամանդազարգ: Արժաթ ժամացոյցներ 50 դրուչէն սկսեալ: Նիքէլ ուրմնութեաւ ժամացոյցներ 22 դրուչէն սկսեալ. նաև ոսկի, արժաթ ոսկեպատ շղթաներ և գոհարեղէններ. ինչպէս նաև պատի և գօնօրի բազմազան բանախմբեր:

Ամերիկեան Նիքէլ ժամացոյցներ, գրասեղանի յատուկ, 10 դրուչի անհաւատալի գնոյ փոխարէն, սրոնք լաւ կը բանին:

Ուրեմն գիմեցէ՛ք ուղղակի

ՍԷԼՎԱՃԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՊԵԼԱԵԱՆ-ԹԻՃՄԱՆԵԱՆ ԸՆԿ.

ԱՍԵՐԻԿԵԱՆ ԳԵՐՁԱԿՆԵՐ

ԱՐԱՆՑ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ

ԵՒ ՉԵԼԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ

Ապսինի մեծ պոլոսային վրայ Տայիբայի Սանիէի դիմացը, նախկին Էլեկտրակոն գործիներու վաճառատունը:

Վերջերս Ամերիկայէն հօս եկած հաստատուած ըլլալով կը յայտարարենք արդոյ հասարակութեան թէ՛ պատրաստ ենք գոհացնել մեզ գիւնդ Պատ. յաճախորդները, փորձի մարտութեան, գինեաւ չափաւորութեան և ճշդապահութեան կողմէն:

Մեր գործատեղոյն մէջ կ'աւանդուին նաև ձեւագիտութեան դասեր ամերիկեան ամենալիբրլին կատարելազործուած մէթոտով,

Մանրամասնութեանց համար դիմել մեր գործատեղին:

ԱՏԱՄԱՐՈՅԺ

Պ. ՆԻԿՈՂԻՍՏՍ

Վերջերս հաստատուած ի Գահիրէ, Գաֆէ տը լա Պուրսի կից, Բ. յարկ, թիւ 9 գասիկանը:

Կը բժշկէ բերնի և ակուպի ամեն տեսակ հիւանդութիւնները: Ազրատները ձրի կը դարմանէ ամեն օր, առաւօտեան ժամը 8էն 9:

ՉՈՒԼԻՉ-ՄԵՐԵՆԱԳՈՐԾ

ՏԻԳՐԱՆ ԵՒ ԵՂԲԱՐԲ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ս. ԴԱՐԻՆԵԱՆԻ ԵԱԿԻՆ ՏՊԱՐԱՆԸ

—X—

Կը ձուլն, կը շինեն երկաթէ տարոյրէ զանազան գործիներ տակելութեան և ուրիշ նուրբ արհեստներու վերաբերեալ, ծորակ, նլի, յաճախորդները գոհացնող պայմաններով:



Ի ԳԱՀԻՐԷ

ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹՔԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ

ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու եւրոպական լեզուաւ ամեն տեսակ հրատարակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցեւոմներ, մահազդեր, հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազրուիւններ, պահարաններ, հաշուեցուցակներ եւն:

Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամօք եւ ձաշակաւոր սպագրութեամբ:

ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ